

**«Հայոց եկեղեցու պատմություն» - 2018**  
**10-րդ դասարան**

**№ 1-4**

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**  
**(0,5 X 4 = 2 միավոր)**

1. **Հայրապետական գահին Ս. Արիստակես Ա-ին հաջորդեց՝** **(0,5 միավոր)**
  - 1) Ս. Հուսիկ Ա
  - 2) Ս. Վրթանես Ա
  - 3) Փառեն Ա Աշտիշատցի
  - 4) Ս. Ներսես Ա
  
2. **Վրաց եկեղեցին բաժանվեց Արևելյան եկեղեցական ընտանիքից և օրթոդոքս եկեղեցու մաս կազմեց՝** **(0,5 միավոր)**
  - 1) 574 թ.
  - 2) 591 թ.
  - 3) 601 թ.
  - 4) 608 թ.
  
3. **Մեծի Տանն Կիլիկիո Հայոց կաթողիկոսությունը հիմնադրվել է՝** **(0,5 միավոր)**
  - 1) 1441 թ.
  - 2) 1446 թ.
  - 3) 1453 թ.
  - 4) 1461 թ.
  
4. **ՀԿ(Բ)Կ Կենտկոմը Մայր Աթոռ Ս. Էջմիածինը փակելու վերաբերյալ որոշում ընդունեց՝** **(0,5 միավոր)**
  - 1) 1938 թ. մարտի 5-ին
  - 2) 1938 թ. հուլիսի 8-ին
  - 3) 1938 թ. օգոստոսի 4-ին
  - 4) 1938 թ. օգոստոսի 8-ին

**№ 5-8**

**Կառուցված պատասխանով առաջադրանքներ**  
**(1 X 4 = 4 միավոր)**

1. **Հայաստանում քրիստոնեության ընդունման ամբողջական պատմությունը շարադրած պատմիչն է՝ \_\_\_\_\_:** **(1 միավոր)**
  
2. **Աքսորից ազատվելուց հետո Սահակ Պարթև կաթողիկոսի նստավայրը գտնվում էր Բագրևանդ գավառի \_\_\_\_\_ բնակավայրում:** **(1 միավոր)**

3. **Տարի կողմից «Պոլոժենիեն» հաստատվելու ժամանակ Հայոց կաթողիկոսն էր.**  
\_\_\_\_\_ : (1 միավոր)

4. 1932 թ. **Ազգային-Եկեղեցական ժողովում Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվեց՝**  
\_\_\_\_\_ : (1 միավոր)

№ 9-10

**Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 5-7 փաստից**

9. **Իրադարձությունը համապատասխանեցնել ժամանակի Հայոց կաթողիկոսի անվանը.** (1 միավոր)

1. Պետրոս Ա Գետադարձ
2. Հակոբ Բ Անավարզեցի
3. Գրիգոր Գ Պահլավունի
4. Գրիգոր Դ Տղա
5. Կոստանդին Ա Բարձրբերդցի
6. Հովհաննես Զ Սսեցի

1	
2	
3	
4	
5	
6	

ա) Հավատացյալների կրոնական կյանքի ճիշտ կազմակերպման և կրոնական կենցաղին վերաբերող 24 կանոնների ընդունումը Սսի ժողովում

բ) Աղթամարի հակաթոռ կաթողիկոսության ստեղծումը

գ) Միարարներին լատինական ծեսով պատարագ, մկրտություն կատարելու, հայերին հռոմեադավան դարձնելու վերաբերյալ կաթողիկոսական կոնդակի հրապարակումը

դ) Պատարագի համար նախատեսված վրանի և մարմարե շարժական սեղանի ուղարկումը Ջաքարե ամիրսպասալարին

ե) Երուսաղեմի հայոց պատրիարքության անջատվելը Կիլիկյան աթոռից

զ) Բջնիի և Ամբերդի եպիսկոպոսությունների հիմնումը

է) Հռոմկլայի համահայկական Եկեղեցական ժողովի հրավիրումը

10. **Տեղանունը համապատասխանեցնել գավառի անվանը.**

(1 միավոր)

- |                  |              |
|------------------|--------------|
| 1) Տարոն         | ա) Երիզա     |
| 2) Արտազ         | բ) Գլաձոր    |
| 3) Շիրակ         | գ) Շահապիվան |
| 4) Եկեղյաց գավառ | դ) Աշտիշատ   |
| 5) Բագրևանդ      | ե) Բագավան   |
| 6) Վայոց ձոր     | զ) Արգինա    |
|                  | է) Ավարայր   |

1	
2	
3	
4	
5	
6	

№ 11

**Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող  
առաջադրանք**

11. **Կաթողիկոսների անունները դասավորել ըստ գահակալման հաջորդականության.  
(1 միավոր)**

- ա) Մկրտիչ Ա Խրիմյան
- բ) Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցի
- գ) Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի
- դ) Դանիել Ա Սուրմառեցի
- ե) Ղուկաս Ա Կարնեցի
- զ) Մակար Ա Թեղուտցի
- է) Ներսես Ե Աշտարակեցի

1	
2	
3	
4	
5	
6	
7	

**№ 12-13**

**Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից**

12. **Կարդալ ստորև բերված տեքստը և պատասխանել հարցերին: (2 միավոր)**

*«Դառնալով Աղվանքի բանակի հրամանատար՝ նա, միաժամանակ, դեռ հոր կենդանության օրոք, իր ձեռքն առավ ամբողջ երկրի կառավարությունը: Իր այդ գործի համար երիտասարդ իշխանը ժողովրդական հերոս դարձավ: ...Մուսավիա խալիֆը «Արևելքի իշխանին» հանձնեց բոլոր արաբական հողերի կառավարումը մինչև Կովկասի մեծ լեռնաշղթան և մանավանդ՝ հոն-խազարների հետ բարեկամական հարաբերությունների մշակումն ու պահպանումը»:*

1. **Ու՛մ աշխատությունից է մեջբերված հատվածը:** \_\_\_\_\_ (1 միավոր)

2. **Ու՛մ մասին են հեղինակի խոսքերը:** \_\_\_\_\_ (1 միավոր)

13. **Կարդալ ստորև բերված տեքստը և պատասխանել հարցին:**

*«Հայ ժողովուրդն օրհասական կռիվներ շատ է ունեցել և միշտ ելք է գտել ու փրկել իրեն: Ելքը եղել է անձնագրի հերոսությունը... Հե՛տ նայեցեք, մեզ մնացել են Երևանն ու Էջմիածինը... Եթե հերոսության չդիմենք, ամեն ինչ կորչելու է իսպառ, այլևս չի լինի ո՛չ հայ, ո՛չ հայի հայրենիք... »:*

1. **Որտե՞ղ են ասվել վերոհիշյալ խոսքերը:** \_\_\_\_\_ (1 միավոր)

**№ 14-15**

**Տերմինների, հասկացությունների, պարճառահերկանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ**

14. **Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞ր անունը չի համապատասխանում շարքի կառուցման սկզբունքին:** (0,5 x 2 = 1 միավոր)

14.1. Սուրբ Ծնունդ, Տյառնընդառաջ (Տրնդեզ), Սուրբ Հարություն (Ջատիկ), Պայծառակերպություն (Վարդավառ), Սուրբ Աստվածածնի վերափոխում, Խաչվերաց:

---

---

14.2. Մարկոս, Ղուկաս, Հակոբոս, Հովհաննես, Մատթեոս:

---

---

15. **Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված:** (1 x 3=3 միավոր)

15.1. (1 միավոր)

- ա. Եղիազար Ա Այնթապցի, Ստեփանոս Ե Սալմաստեցի, Ստեփանոս Դ Տղա, Աբրահամ Գ Կրետացի,
- բ. Կարապետ Ա Եվրոկացի, Կիրակոս Ա Վիրապեցի, Սիմեոն Ա Երևանցի, Ստեփանոս Ե Սալմաստեցի
- գ. Աղեքսանդր Ա Ջուղայեցի, Աբրահամ Գ Կրետացի, Սիմեոն Ա Երևանցի, Ղուկաս Ա Կարնեցի

15.2. (1 միավոր)

- ա. Մաշտոց Ա Եղիվարդեցի, Հովհաննես Ե Դրասխանակերտցի, Վահան Ա Սյունեցի, Խաչիկ Ա Արշարունեցի
- բ. Ջաքարիա Ա Ձագեցի, Հովհաննես Ե Դրասխանակերտցի, Խաչիկ Ա Արշարունեցի, Գրիգոր Գ Պահլավունի
- գ. Հովհաննես Ե Դրասխանակերտցի, Վահան Ա Սյունեցի, Գրիգոր Բ Վկայասեր, Բարսեղ Ա Անեցի

15.3. (1 միավոր)

- ա. Ս. Արիստակես Ա, Ս. Վրթանես Ա, Ս. Հուսիկ Ա, Ս. Գյուտ Ա Արաիեզացի
- բ. Ս. Վրթանես Ա, Ս. Հուսիկ Ա, Ս. Ներսես Ա, Ս. Սահակ Ա Պարթև
- գ. Ս. Արիստակես Ա, Ս. Հուսիկ Ա, Ս. Հովսեփ Ա Հողոցմեցի, Ս. Ներսես Դ Շնորհալի

**№ 16-17**

**Նկար-առաջադրանք՝ կազմված երկու հարցից (յուրաքանչյուր հարցին՝ 2 x 0,5 = 1 միավոր)**

16. ա. Ովքե՞ր են պատկերված:

բ. Գրել նրանց գահակալման տարիները:



1.



2.



3.



4.

1. ա \_\_\_\_\_ բ \_\_\_\_\_

2. ա \_\_\_\_\_ բ \_\_\_\_\_

3. ա \_\_\_\_\_ բ \_\_\_\_\_

4. ա \_\_\_\_\_ բ \_\_\_\_\_

№ 17  
**Շարադրանք (2 միավոր)**

1. **Ներկայացրե՛ք Հայոց եկեղեցու Հաղորդության խորհուրդը. խորհրդի իմաստը, հաստատումը, կարգը:**
2. **Ներկայացրե՛ք Ս. Հովհաննես Գ Օձնեցի կաթողիկոսի գործունեությունը:**
3. **Ներկայացրե՛ք Աղվանից կաթողիկոսությունը որպես Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռներից մեկը:**
4. **Ներկայացրե՛ք բարոյական ազատության կողմնորոշիչներից (բարոյական զգացումներ) խիղճը, պարտքի և պատասխանատվության զգացումները:**